

## Տեղեկատվություն

<<Դիլիջան>> ԱՊ ՊՈԱԿ-ի 2016թ-ի ապրիլ ամսվա կատարված աշխատանքների

22.04.2016 թվականին <<Դիլիջան>> ազգային պարկի այցելուների կենտրոնի մասնաշենքում անց է կացվել ՀՀ Ազգային ժողովի գյուղատնտեսական և բնապահպանական հարցերի մշտական հանձնաժողովի արտագնա նիստը, որին մասնակցել է Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարար Արամայիս Գրիգորյանը: Սևան-Դիլիջան մայրուղու հարակից հատվածում նախարարը, ՀՀ Աժ գյուղատնտեսական և բնապահպանական հարցերի մշտական հանձնաժողովի անդամների, ՀՀ Գեղարքունիքի և Տավուշի մարզպետները, ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակիցների, հասարակական կազմակերպությունների և համայնքների ներկայացուցիչների մասնակցությամբ իրականացրել է ծառատունկ:

Ապրիլ ամսին պահպանության բաժնի աշխատակիցների կողմից <<Դիլիջան>> ազգային պարկի տարածքում հայտնաբերվել է ապօրինի հատված 49 ծառ, որոնց համար կազմվել է 10 անտառխախտման արձանագրություն և ուղարկվել Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության աշխատակազմի բնապահպանական պետական տեսչության Տավուշի տարածքային բաժին: <<Դիլիջան>> ազգային պարկ>> ՊՈԱԿ-ի <<Դիլիջան տեղամաս>> մասնաճյուղի տարածքում իրականացվել է 2016 թվականի Պլան-Ծրագրով նախատեսված անտառկուլտուրայի լրացում՝ 3,0 հա, անտառկուլտուրայի ագրոտեխնիկական խնամք՝ 3,0 հա, բնաշիվային եղանակով անտառի վերականգնման աջակցման աշխատանքներ՝ 5,0 հա : Տնօրենի 15.04.2016 թվականի N 103-Լ հրամանով իրականացվում է 2016 թվականի զարնանային հերթական ստուգողական ստուգումները:

Գիտական բաժնի աշխատակիցների կողմից <<Դիլիջան>> ազգային պարկի տարածքում իրականացվել են ֆենոլոգիական ուսումնասիրություններ, <<Դիլիջան>> ազգային պարկի տարածքում գտնվող Պարզ լճի՝ որպես առանձին էկոհամակարգի ուսումնասիրության որոշակի աշխատանքներ: Իրականացվել են նախապատրաստական աշխատանքներ <<Դիլիջան>> ազգային պարկում տարածված սողունների ուսումնասիրության համար:

Էկոտուրիզմի և ռեկրեացիայի բաժնի աշխատակցի կողմից շրջայցեր են կատարվել E6՝ Աղավնավանքի եկեղեցի-Կենու պուրակ, E4՝ Պարզ լիճ-Գոշավանք և E9՝ Գոշավանք-Գոշ լիճ էկոերթուղիներում: Էկոտուրիզմի և ռեկրեացիայի բաժնի աշխատակիցը մասնակցություն է

ունեցել IN TOUR EXPO 2016 միջազգային զբոսաշրջային ցուցահանդեսին՝ ներկայացնելով <<Դիլիջան>> ազգային պարկի ռեկրեացիոն և էկոտուրիստական հնարավորությունները:

<<Դիլիջան>> ազգային պարկ>> պետական ոչ առևտրային կազմակերպության կարիքների համար անց են կացվել մրցույթեր գյուղատնտեսական տրակտորի ձեռք բերման և ավտոմեքենաների գազաբալոնային համակարգերի ձեռք բերման և տեղադրման համար: Կնքվել են համապատասխան պայմանագրերը: